

Հաշվետվություն
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի
2010 թվականի գործունեության

ՀԱՍՏԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը իրականացնում է հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորվող ոլորտներն են՝

ա) Էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը.

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցություն), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը.

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառը.

ե) փոստային կապի բնագավառը.

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

Նշված ոլորտներում ծագող հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով:

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ էլեկտրոնային և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և արդյունավետ ներդրումների խրախուսման ապահովման առաջնահերթություններից:

2010 թվականին Հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել ճյուղային օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 4 օրենքների նախագծեր և դրանք ընդունվել ու ուժի մեջ են մտել 2011 թվականին:

Օրենսդրական փոփոխությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովը ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում՝ արտադրական ենթակառուցվածքների, տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում՝ տնտեսական զարգացման նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունների հետ:

2010 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում Հանձնաժողովը հրապարակել է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը:

Հանձնաժողովը իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որը ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- Հանրային ծառայությունների կարգավորման և սպառողների հետ կապերի բաժին,
- Տնտեսական, մրցակցային միջավայրի հետազոտության, վերլուծության և վարչական վարույթի բաժին,

- Հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման բաժին,
- Հաշվառման և վերահսկողության բաժին:

Հանձնաժողովի աշխատակազմի կողմից 2010 թվականին նախապատրաստվել է Հանձնաժողովի 17 նիստ, որտեղ քննարկվել ու ընդունվել է 82 որոշում, այդ թվում՝ 31 նորմատիվ, 3 լուրջ և 48 անհատական ակտեր: Հանձնաժողովի նիստերին մասնակցել են պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների հիման վրա տրված արձանագրային հանձնարարականները կատարվել են ճիշտ և ժամանակին: Բացի դրանից Հանձնաժողովի նախագահի մոտ կայացած խորհրդակցությունների արդյունքներով տրվել է 18 հանձնարարականներ, որոնք կատարվել են սահմանված կարգով: Ստորագրվել է 102 հրաման, որոնք կրել են կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթ: Աշխատակազմի աշխատակիցների հետ կնքվել է 35 աշխատանքային պայմանագրեր, կապված աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման ու կառուցվածքային փոփոխությունների հետ:

2010 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմ մուտք է գործել 659 գրություն, ընդ որում՝ 54 նամակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունից և պետական կառավարման մարմիններից, 164-ը՝ փաստաթղթաշրջանառության գրություններ են, 370-ը՝ ստացվել են հիմնարկ-ձեռնարկություններից և այլ մարմիններից: 71 գրություններ լիցենզավորման ու սակագների վերաբերյալ հայտեր էին, որոնց ուսումնասիրման համար կազմակերպվել են փաստերի ճշտման այցելություններ:

Կազմակերպվել է Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի 24 աշխատակիցների 12 գործնական այցելություններ Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ:

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՅՍԿՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2010 թվականին հոկտեմբերի 2-ին համագործակցության համաձայնագիր է կնքվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ: Մշակվել է համատեղ գործունեության ծրագիր 2011 թվականի համար, որի շրջանակներում իրականացվելու են մի շարք միջոցառումներ ուղղված երկու մարմինների հետագա մերձեցմանը, պետական կարգավորման ոլորտներում օրենսդրությունների և կիրարկման մեխանիզմների ներդաշնակեցմանը, հանձնաժողովների համագործակցության զարգացմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանձնաժողովի ինտեգրմանը, միջազգային կառույցներում:

2010 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ 2010 թվականի ընթացքում այս ոլորտի վերաբերյալ ընդունվել է 21 նորմատիվ ակտ:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2010 թվականի որոշումներով կատարվել են փոփոխություններ ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման համապատասխան կարգերում, ինչի արդյունքում էներգետիկայի ու այլ բնագավառների որոշ կարգավորվող ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ու տեխնիկատնտեսական տեղեկատվությունները ենթարկվել են քանակական ու որակական բարելավումների: Կատարված փոփոխությունների գլխավոր նպատակն էր օժանդակել կարգավորվող անձանց, թեթևացնելու լիցենզավորված գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման ընթացակարգը: Հատկապես ուշադրություն է դարձվել լիցենզավորման գործընթացին, լիցենզավորման համապատասխան կարգերի մշակմանը, բնագավառում լիցենզավորված անձանց լիցենզիաների անբաժանելի մաս կազմող պայմանների սահմանմանը, լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկաների ընդունմանը և Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման վերահսկողությանը:

Հանձնաժողովի որոշումներով տրամադրվել են «Թրդի-1», «Թրդի-2», «Մատաղիս-1», «Մատաղիս-2», «Սյունիք-1» փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և «Թրդի-1», փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության և էլեկտրական էներգիայի արտահանման լիցենզիաներ: Բացի նշվածից հանձնաժողովը տրամադրել է նաև բնական գազի ներկրման մեկ լիցենզիա:

Ջերմամատակարարման համակարգի կարգավորող ընկերությունների համար հանձնաժողովը 2010թվականին հաստատել է ջեռուցման նոր սակագներ և կատարել է գործող

կարգերում փոփոխություններ, համաձայն որոնց ջերմատակարարում իրականացնող ընկերությունները պարտավոր են սահմանել գնումների իրականացման կարգեր՝ ըստ գործող օրենսդրության:

Ջրային համակարգի կարգավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ջրային օրենսգրքով վերապահված իրավասությունների ու գործառնությունների շրջանակում: 2010 թվականին կատարվել են աշխատանքներ այս բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ 2010 թվականի ընթացքում ընդունվել է 3 որոշում: Այս բնագավառում հանձնաժողովը դեռևս անելիքներ չատ ունի:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կարգավորումն իրականացվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով

2010 թվականի նոյեմբեր ամսում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպվել է հանդիպումներ Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ոլորտի տնտեսավարող սուբյեկտների՝ «Արմենտել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների հետ, որտեղ քննարկվել ու լուծվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ոլորտի զարգացման, փոխկապակցման ծառայությունների վճարների վերաբերյալ մի շարք խնդիրներ: Ընդունվել են փոխկապակցման ծառայությունների վճարների միատեսակ սակագներ:

2010 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև սակագների և փոխկապակցման վճարների վերաբերյալ:

Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձրել զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությանը: Մասնավորապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստատեսության ներկայացուցիչների ու թերթերի կողմից լուսաբանվել են Հանձնաժողովի նիստերը, պատրաստվել են 3 առանձին հարցազրույցներ, թերթում տպագրվել է 5 հոդվածներ, նվիրված Հանձնաժողովի գործունեությանը, խնդիրներին և Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների հետ համագործակցությանը: Հեռուստատեսության կողմից պատրաստվել են 7 հեռուստառեպորտաժներ: Բացի դրանից կազմակերպվել է բրիֆինգներ Հայաստանի Հանրապետության համապատասխան Հանձնաժողովների, Հ. Ղահրամանյանի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Ռ. Յիրիկյանի մասնակցությամբ ու լուսաբանվել տասնյակ լրատվամիջոցների կողմից:

Այս բնագավառում 2010թվականին Հանձնաժողովի կողմից ընդունվել է 40 որոշում՝ որից 18-ը՝ նորմատիվ և 22-ը՝ անհատական: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 17 լիցենզիա, ռադիոռելեային գծերի համար ռադիոհաճախականությունների օգտագործման 1 թույլտվություն և Ստեփանակերտ քաղաքի տարածքում ռադիոհաղորդումների եթերային վերահեռարձակման համար 1 լիցենզիա:

Գործարար միջավայրի զարգացմանը նպաստելու նկատառումից ելնելով՝ կատարվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգի պարզեցում՝ մասնավորապես կրճատվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, պարզեցվել են վճարների հաշվարկման ձևերը, նվազեցվել է արբանյակային կապի երկրային կայանի թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափը՝ համապատասխանաբար 94.4 տոկոսով և 66.6 տոկոսով:

Աշխատանքներ է կատարվել **անշարժ ու շարժական հեռախոսակապի** սակագների նվազեցման ուղղությամբ: Մասնավորապես անշարժ հեռախոսահամարի միացման վճարը նվազեցվել է 46 տոկոսով, իսկ բնակչության համար հրապարակային օֆերտայի միջոցով՝ 70 տոկոսով: Բարելավվել է նաև այդ բնագավառի գների ինդեքսը՝ կազմելով 92,1 տոկոս /Վիճակագրական տեղեկագիր/: Բարեփոխումների այս գործընթացը կլինի շարունակական:

Ներկայացվող աշխատանքները հիմնականում ուղղված են եղել անշարժ և շարժական հեռախոսակապի, ինտերնետ կապի սակագների նվազմանը՝ ի նպաստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանը ու հանրապետությունում գործարար միջավայրի զարգացմանը և արդյունքում գների ինդեքսը նվազել է ու կազմել 92,1 տոկոս:

Հանձնաժողովի կողմից առանձնակի ուշադրություն է դարձվել հեռավոր շրջաններում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի զարգացումը խթանող պայմանների ստեղծմանը, հաստատվել է նոր անլար ֆիքսված միջերես (WLL) համակարգի ծառայությունների սակագները:

Միջոցառումներ են իրականացվել ֆիքսված և բջջային կապի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը ընդլայնելու ուղղությամբ, ինչի արդյունքում ցանցի օպերատորի ծառայությունները ընդլայնվել են նոր սակագնային պլաններով:


Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ ընդունվել են որոշումներ, որոնցով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում կապի ոլորտում օպերատորների համար կիրառվող սակագներին համահունչ սակագներ (փոխկապակցման վճարների մասով):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն կատարվող զանգերի սակագները նվազել են միջինը 33.6 տոկոսով, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ից հետո այդ ցուցանիշը կհատի 42.8 տոկոսի սահմանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներցանցային զանգերի սակագները նվազել են միջինը 12.9 տոկոսով, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ից հետո կնվազեն միջինը 27.1 տոկոսով:


Միջազգային զանգերի սակագները նվազել են միջինը 52 տոկոսով՝ ինտերնետ կապից և միջինը 61 տոկոսով՝ սովորական կապից օգտվելու դեպքում:

Հաշվի առնելով համաշխարհային ինտերնետային ցանցի մեծ պահանջարկը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության համար այն ավելի հասանելի դարձնելու նպատակը, 2010 թվականին նվազեցվել է **տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման** սակագները 53.5 տոկոսով և առաջիկայում այն հնարավորինս կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետությունում գործող սակագներին: Նշված միջոցառումների արդյունքում ավելացել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների թիվը:




Ընդհանուր առմամբ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կատարված բարեփոխումների արդյունքում կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող առանձին ծառայությունների սակագները զգալի նվազել են:


Միջազգային զանգերի սակագներ՝ սովորական կապով






Միջազգային զանգերի սակագներ՝ ինտերնետ կապով




ԼՂՀ տարածքում կատարվող ներցանցային զանգերի սակագներ





DSL մոդեմով անսահմանափակ մուտքով բաժանորդների ամսավճարներ



Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման գործընթացը պարզեցնելու նպատակով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգի մեջ սահմանվել են մրցութային առաջարկների ընդունման և մրցույթի հաղթողի ճանաչման համար նոր ողջամիտ ժամկետներ, ինչը ստեղծել է առավել նպաստավոր պայմաններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի զարգացման համար:

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում նպատակ ունի իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու տնտեսական մրցակցության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց շահերը, անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը:

2010թվականի ընթացքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության» բնագավառում Հանձնաժողովի կողմից ընդունվել է 6 անհատական որոշում: Ընդունված 4 որոշումների հիման վրա 9 տնտեսավարող սուբյեկտներ ճանաչվել են գերիշխող դիրք ունեցող, իսկ 2-ը՝ մենաշնորհի դիրք ունեցող:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի հնարավոր խախտումների բացահայտման նպատակով Հանձնաժողովի աշխատակազմը պարբերաբար իրականացրել է ապրանքային շուկաների դիտանցումներ: 2010թ. օգոստոսի 21-ից մինչև դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել են դիտանցումներ 55 առևտրային օբյեկտներում՝ գնային տատանումներին օպերատիվ արձագանքելու, չիմնավորված գների հայտնաբերման, կանխարգելման աշխատանքների համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության բացահայտման ուղղությամբ:

Նշված ժամանակահատվածում կատարվել են 21 այցելություններ հետևյալ ապրանքատեսակների գծով՝ հացամթերք, ալյուր, մակարոնեղեն, հնդկաձավար, ոսպ, բրինձ, մսամթերք, երշիկ, նրբերշիկ, կաթնամթերք, կարագ, կենդանական յուղ, պանիր, կարտոֆիլ, կաղամբ, սոխ, շաքար, շաքարավազ, ձու, բուսական յուղ, մարգարին, թեյ, բենզին, դիզվառելիք: Հիմնականում ուշադրության կենտրոնում է պահվել սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների գնագոյացման գործընթացները:

Իրականացված դիտանցումների արդյունքում արձանագրված ապրանքային շուկաների գնաճի վերաբերյալ իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ: Օգոստոս ամսվա արձանագրված հաց ապրանքային շուկայի գնաճի վերաբերյալ Հանձնաժողովը իրականացրել է ուսումնասիրություն և կարգավորել հացի գինը: Ուսումնասիրություններ են իրականացվել նաև «Կաթնամթերք» և «Պանիր» ապրանքային շուկաներում:

2010 թվականի հոկտեմբերի 16-ին համագործակցության համաձայնագիր է կնքվել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական

հանձնաժողովի հետ: Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ ուղղված տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության խնդիրների, վարույթների իրականացման, տեղեկատվության տրամադրման, օրենսդրական ակտերի մշակման և կիրառման հարցերի լուծմանը:

Ռեեստրում գրանցված տնտեսավարող սուբյեկտներին վերաբերող տեղեկատվության, ապրանքային շուկաների վերլուծությունների, Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցման տվյալների և արդյունքների, պետական մարմիններից, տնտեսավարող սուբյեկտներից, այլ աղբյուրների ստացված տեղեկատվությունների համար ստեղծվել է անհրաժեշտ տեղեկատվական բազա:

Հանձնաժողովը փոստային համակարգի աշխատանքների կարգավորման համար ուսումնասիրություն է իրականացրել «Վրցախփոստ» փակ բաժնետիրական ընկերությունում, ուսումնասիրել է Ընկերության և Հայաստանի Հանրապետության «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված պայմանագիրը և առաջարկել պայմանագրում լրացնել փոստային առաքանու առաքման հսկիչ ժամկետների վերաբերյալ դրույթներ:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառի կարգավորումը Հանձնաժողովին վերապահված է միայն սակագների սահմանման և վերանայման մասով՝ համաձայն «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի:

Ի մի բերելով կատարված աշխատանքները կարելի է ամրագրել, որ.

- Վերահսկվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող պետական տուրքի և պարտադիր վճարների վճարումների կատարողականները:

- էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերություններին համապատասխան գրությամբ պահանջվել է լիցենզիայի մինչ այժմ չիրագործված պայմանների կատարումը: Իրականացվել է մոնիթորինգ նշված ընկերություններում լիցենզիայի պայմանների կետերի կատարողականության նպատակով և կազմվել է համապատասխան տեղեկանքներ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ:

- էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից սահմանված կարգով ներկայացված լիցենզավորված գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները և տեխնիկատնտեսական, ինչպես նաև սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվությունները ենթարկվել են վերլուծության և ստեղծվել է բազաներ:

- Ջրային համակարգի կարգավորվող ընկերություններին ուղարկվել են համապատասխան գրություններ՝ պահանջելով հանձնաժողովին իրազեկել թույլտվության պայմանների կատարման մասին: Ինչպես նաև իրականացվել է մոնիթորինգ կարգավորվող ընկերություններում թույլտվության պայմանների կետերի կատարողականության նպատակով և կազմվել են համապատասխան տեղեկանքներ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ:

- «Ջրային տնտեսություն» և «Ջրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ներկայացվել են լիցենզավորված գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններ և տեխնիկատնտեսական տեղեկատվություններ, համապատասխանաբար կատարվել է վերլուծություն և ստեղծվել է բազա:

- Կանոնակարգվել է հեռահաղորդակցության բնագավառը:

- Մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումներ:

- Ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրության է ենթարկվել տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովը 2010 թվականին իրականացրել է համապատասխան օրենսդրական, մեթոդական հսկողական և վերահսկողական աշխատանքներ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի 300 729 546 դրամ մուտքեր, այդ թվում՝ պետական տուրքեր՝ 20 755 000 դրամ, պարտադիր վճարներ՝ 34 394 080 դրամ,

ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարներ՝ 5 580 000 դրամ, ռադիոհաճախականության վճարներ՝ 239 992 466 դրամ, տույժեր՝ 8 000 դրամ:

2010 թվականի Հանձնաժողովի պահպանման և գործունեության համար անրաժեշտ ծախսերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատված բյուջետային ֆինանսավորման հայտի (նախահաշիվ) համաձայն կազմել է 49 134 400 դրամ, այդ թվում՝ աշխատանքի վարձատրություն՝ 34 749 000 դրամ: Հանձնաժողովի կատարած փաստացի ծախսը կազմել է 40 967 705 դրամ կամ պահպանման ծախսերի 83.4 տոկոսը:

Հաշվի առնելով ֆինանսական, տնտեսական առկա և ակնկալվող մարտահրավերները, ակնկալելով շահագրգիռ մարմինների գործուն օժանդակությունը՝ Հանձնաժողովը նախատեսում է հետևողականորեն կենսագործել հաստատված ծրագրերն ու ակտիվ մասնակցություն ունենալ տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումներին: